ΝΙΚΟΣ ΧΡΥΣΟΣ

ΚΑΙΝΟΥΡΓΙΑ ΜΕΡΑ

ΜΥΘΙΣΤΟΡΗΜΑ

ՆԻԿՈՍ ԽՐԻՍՈՍ

ԼՈՌՈՄ

ՎԵՊ

Թարգմանությունը հունարենից՝
Շուշան Կարապետյանի

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 821.14-31 Խրիսոս
ԳՄԴ 84(4Հուն)-44
Խ 914

Խրիսոս Նիկոս
Խ 914 Նոր օր: Վեպ / Ն. Խրիսոս; Թարգմանությունը հունարենից՝ Ճ. Կարապետյանի.- Եր.: Newmag, 2023.- 672 էջ:

Դեկտեմբերյան մի գիշեր Նավահանգստի մութ անկյուններից մեկում երեք տղամարդ ողջ-ողջ այրում են Սեբաստիանին, որը թափառական գուշակի համբավ ուներ... Երեք հանցագործների մեջ ամենաերիտասարդ անձը՝ Պողոսը, իրենց հանցանքի դաժանությունից ցնցված, սկսում է զոհի մասին տեղեկություններ փնտրել: Նա հույս ունի, որ այդ կերպ կքավի իր մեղքը, և հավատում է, որ սպանվածի կենսագրությունն ի մի բերելով՝ կվերակենդանացնի նաև նրան: Պողոսը գտնում է Սեբաստիանի հիմնական ուղեկիցներին և խնդրում պատմել իրենց առաջնորդի մասին... Ամեն մեկն ունի իր պատմությունն ու գաղտնիքները, յուրաքանչյուրի պատմության մեջ մի մութ անկյուն է մնում, ու Սեբաստիանի կերպարն ավելի միֆական է դառնում:

ՀՏԴ 821.14-31 Խրիսոս
ԳՄԴ 84(4Հուն)-44

ISBN 978-9939-967-08-0
Նիկոս Խրիսոս «Նոր օր» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
© Nikos Chrysos- KAINOYPIA MEPA (Kainouria mera) and Kastaniotis Editions S.A., Athens, 2018

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Kastaniotis Editions S.A. ընկերության հետ կնքած պայմանագրով:

Co-funded by the
Creative Europe Programme
of the European Union

The book is published and co-funded by
the Creative Europe Programme of the European Union

Գիրքը հրատարակվել է Եվրոպական
Միության «Ստեղծարար Եվրոպա» ծրագրի
համաֆինանսավորմամբ

The content of this book represents the views of the author only and is his/her sole responsibility. The European Commission and the Agency do not accept any responsibility for use that may be made of the information it contains.

Եվրահանձնաժողովը և Գործակալությունը որևէ պատասխանատվություն չեն կրում գրքում արտահայտված մտքերի համար:

GreekLit.

This publication was supported by the Hellenic Ministry of Culture and Sports
and the Hellenic Foundation for Culture within the framework of the GreekLit programme

Այս գրքի հրատարակմանն աջակցել է Հունաստանի մշակույթի ու սպորտի
նախարարությունը և Հունաստանի Մշակույթի հիմնադրամը՝
GreekLit ծրագրի շրջանակում:

Բովանդակություն

Գլուխ 1		11
Գլուխ 2	Տեոսի պատմությունը	77
Գլուխ 3	Մարկոնիսի պատմությունը	195
Գլուխ 4	Լակիի պատմությունը	271
Գլուխ 5	Հովհաննեսի պատմությունը	357
Գլուխ 6	Մեկ օր անց	487
Գլուխ 7	Պողոսի արխիվը	561
Գլուխ 8	7 Նշում	659

Էլ չշատախոսեմ. ավելի լավ է՝ ասա՝ ինձ, թե կարող ես,
Ասա՝ ինձ հենց դու,
Հենց դու գիտես այս ամենի իմաստը,
Ի՞նչ անենք մենք հիմա
Պրևեզայի* հետ՝ Աթենքի կենտրոնում կանգնած:

Սուրիրդիս Սարակիս, «Մահ»

Քեզ հանդիպեցի՝
Մաղելով դարերը
Նոր օրվա մեջ...

Սպիրոս Ցարակոս, «Հնչյուններ»

* Պրևեզա (հուն.՝ Πρέβεζα), քաղաք Հունաստանում (Ծանոթագրությունը՝ **new**տաց-ի):

Այս գիրքը բոլորի համար չէ. այսպես կգրեր նա առաջին էջում՝ բառերի անկենդան հաջորդականությամբ, առանց երևակայության: Տրված էջերի այս թղթե հերթականությունը կատարյալ խորանարդի տեսք ունեցող անկատար մի ամբողջականություն է, գրադարանների դարակներում և գրախանութների հեռավոր անկյուններում մոռացված մի հուշ՝ անպաշտպան, բաց, խոցելի ու հասանելի բոլորին, բոլորին, բայց ոչ այն մեկին: Գիրքն այստեղ է, իսկ նա չկա:

Այս գիրքը, այս գրողի տարած գիրքը, որը խուսափում եմ ձեռքս առնել: Իսկ նա... նա այս գիրքը չէր գրի. ոչ թե ամոթից կամ, ասենք, վախից, չէ՛, նա վախեցող չէր, նա չէր վախենում նաև այն ժամանակ, երբ խոսում էր դրսում՝ դառնաթոր հայհոյելով այն երեկոն, ճանապարհի այդ հատվածը... Չէ՛, նա չէր վախենում, նա ոչ ոքի էլ բանի տեղ չէր դնում: «*Զի որ ոք ամօթ համարեսցի զիս և զբանս իմ ի շնացող*»*: Ուշադրություն չէր դարձնում նրանց, որոնք իրենց ականջները խնայում էին, չէր խնայում հատկապես սուտ կույսերին և կեղծ բարեպաշտներին:

Դեռ փոքրուց մեծ սեր էր տածում բառերի նկատմամբ, ամեն մեկին շնորհում էր յուրահատուկ ու չկրկնվող մի դեր, ճիշտ այնպես, ինչպես վարվում էր սեփական ակնոցների հետ. երկու զույգ ուներ, որոնցից ոչ մեկը նրան չէր օգնում ավելի լավ տեսնել, երկուսն էլ անպիտան էին ու հաճախ էին հայտնվում աղբամանում, բայց կարճ ժամանակ անց տերն ափսոսում էր ու հետ վերցնում դրանք: Կիրակի օրերին մետրոյի կենտրոնական կայարանի մոտակայքում սովորաբար կրում էր այն մեկը, որ ծանր, ոսկրանման կմախք ու տաք սուրճի գույն ուներ և համարյա նոր էր, իսկ ահա մյուս օրերին կրում էր այն երկրորդը, որին մտերմիկ տոնով «ժեշտ» էր անվանում: Երկուսով էլ մշուշոտ էր տեսնում: Իրերի հեռավորությունը, խորությունը, անկյունները տեսնելու, ընկալելու համար

* Ավետարան ըստ Մարկոսի, 8:38:

պետք է փոխեր իր դիրքը: Այդ էր, ի՞նչ արած: *Ուրեմն, երանի նրանց, որոնք այս երկնքի տակ անգեն են, ովքեր ունեն դատարկ, անպիղծ ձեռքեր: Եվ քանզի անշունչ հոգին անխոցելի է իր միայնության մեջ, ուստի կույրի աչքն ավելի լավ է տեսնում:*

Ոչ Մարկոնիսը, ոչ էլ Լակին նրան չէին հասկանում, բայց հենց տմբտրմբացնում էին գլուխները, մի կարճ ժամանակով նրանց էր տալիս իր ակնոցները, «ժեշտը»՝ Լակիին, իսկ մյուսը՝ կիրակի օրվանը՝ Մարկոնիսին: *Կույրի աչքն ավելի լավ է տեսնում:*

Նախքան այս պսևդոնախաբանը տպելը՝ նա վերոգրյալ այդ արտահայտությունը հաստատ կդաջեր առաջին իսկ էջին՝ որպես ողջույնի խոսք: Կռանալով գրախանութների ցուցափեղկերի վրա՝ նա նշումներ կաներ գրքի օրինակների վրա՝ մի աչքը ոչինչ չկռահող աշխատակիցների վրա պահած (քսանչորս տառ և մի վերջակետ): Դատարկ էջի վրա նա մարկերի քիթը մի քիչ սեղմած կպահեր և հետո մի հետագիծ կթողներ... Մի պահ կուզղեր մեջքը, որ բազմիմաստ բառերը հստակ իմաստ արտահայտող նախադասության մեջ միացներ:

Այս գիրքը բոլորի համար չէ. դատարկ ու կարճիմաստ թվացող արտահայտություն, նախաբան և վերջաբան միտք՝ հաշվարկված ու ինը վանկերի մեջ տեղավորված:

՝ . ~

Հեգնախառն և հարբած աչքերով այսպես կոչված Սարսափը քրտնաթոր ցեմենտի վրա մի ոտքը դրեց մյուսի կողքը: Հենց մարմնի հավասարակշռությունն իրենց վրա պահող ներբանները հպվեցին թաց մակերեսին, ծնկներն ուղղվեցին, և հարյուր կիլոգրամ կշռող միսն ու ոսկորները վեր բարձրացան, հոդերը ճռռացին՝ շշնջալով իրենց անխուսափելի մաշվածության մասին. թեթև ճռռոց և փոքրիկ անհանգստություն:

Թեպետ Սարսափը դեռ երեսուն տարեկան էլ չկար:

Փողոցի լուսատուն հնազանդ, չիոգնող ռիթմով թարթում էր աչքերը: երկու քայլ այն կողմ սահմանն էր՝ այն մտացածին գիծը, որը բաժանում և միացնում էր քաղաքն ու աղբանոցը: Գարշահոտն ու այրվող փայտը, օքսիդացող չուգունն ու ամոնիակը, ծխահոտն ու կեղտը: Փափկահողով

ծաղկաթմբերը չէին թողնում, որ բորբոսնած տերևները չորանան, ինչպես ոտքերն են խոնավ մնում նոր լվացված և դեռ թաց գուլպաների մեջ:

Միշտ ձմեռ էր բուրում:

Հնամաշ ավտոբուսները փռել էին իրենց ստվերները կաթվածահար եղած կետերի նման, բենզինի և նավթի բույրը ներծծվել էր շենքերի, ավտոմեքենաների ու մարդկանց մեջ, և, չնայած դրան, բույրը համառորեն ու նորի պես նյարդայնացնում էր: Աղբն ինքնամոռաց նեխում էր սայլակների տակ, անգործությունից հալված անիվները և մեքենայի ծանրության ու կմախքի բեռան տակ խեղճացած անվահեծերը՝ ճմռթված և անշարժ, կորցրել էին իրենց փայլը: Թղթի թափոններ, որ մինչև այստեղ քշել-բերել էր քաղաքի աղտոտված շունչը, ծռմռված, թիթեղյա անոթներ, պատառոտված ցնցոտիներ, ճմռթված արկղեր, կիսաջնջված պիտակներով դատարկ շշեր...

Տանյակ անտուններ ապաստան էին գտել հին դեպոյում, ավտոբուսների կոտրված պատուհանների ապակիների փոխարեն թղթե տուփեր ամրացնելով՝ ամեն մեկն իր համար գիշերելու սենյակ էր սարքել: Ծածկոցներ, գործվածքներ, կտորտանքներ, թաց սավաններ, որոնց եզրերը ցրտից քարացել էին, սրվել-դարձել ածելիների սուր-սուր կտորտանքներ, որ ամեն ինչին լուծում կարող էին տալ, հատկապես հուզախառը քնի ու արթմնի երազների միջև:

Միևնույն գորշ մղձավանջն էր թե՛ բաց, թե՛ փակ աչքերով, և թեպետ մեկը մյուսի կողքին էր, սակայն ամեն մեկն էլ իր սեփական միայնության մեջ էր կարծրացել՝ առանց կողքինի հետ կիսվելու, հաղորդակցվելու որևէ ցանկության: Անհամաչափ ու աններդաշնակ շնչառությունները՝ ծանրացած ցրտից և սովի ուժգնությունից, ընդհատվում էին մե՛կ վայրի հազից, մե՛կ անեծքներից, իսկ ավելի հաճախ՝ հայհոյանքներից:

> *Պառկի՛ր քնելու և կոշիկներ պատվիրի՛ր կոշկակարի մոտ ու անպայման ասա՛, որ դրանք կարմիր կարի, վրան էլ չմոռանա մարգարիտներ ամրացնել:*

Դատարկ տակառների մեջ կրակ էին վառում: Կրակը տեսնելուն պես ջերմանում էին, հալվում: Անթարթ ու սառը հայացքներով նայում էին հրե լեզվակներին և ակամայից ավելի ամուր էին սեղմվում ծածկոցների մեջ,

որոնց վրայի կեղտն ու անցքերն իրենց պես ջանում էին հիշողության մեջ պինդ պահել ամենաբաղձալի ջերմության բույրը:

Մաշված ծնկներ, քրքրված թևքեր, կեղտակորույս արմունկներ, հագուստի ու մարմնի արանքում դրված թերթի էջեր, որոնց նպատակը ողնաշարը ոտքերից գոնե մի փոքր ավելի տաք, գլխից էլ մի քիչ ավելի ուղիղ պահելն էր, գլուխ, որը խոնարհվել էր գիտելիքների անօգուտ բեռից և անձրևների անվերջանալիությունից:

Նա՛-նա՛-նա՛, և սո՛ւս, սո՛ւս, սո՛ւս,
Թիկունքում քո, հապա՛, տե՛ս՝
Ինչ-որ լաթեր են ծածանվում,
Ինչ-որ երթեր են անցնում
Ու քեզ ծեծում, ծեծում:

Սարսափը լայն բացեց ձեռքերը, մի ճիչ կրակեց օդ, քամին էլ կրկնեց այն: Փակեց մեքենայի դուռը, նրա կողքին կանգնեցին երկու երիտասարդ, որոնցից կարճահասակը վիսկիի մի շիշ բացեց:

— Թող մաքրվի էս տարածքը,– կենաց-մաղթանք ասաց նա:

Հենց մի կում արեց, Սարսափը խլեց նրա ձեռքից շիշը, ապա թփթփացրեց Պողոսի՝ խմբի երրորդ անդամի ուսին և շիշը խոթեց վերջինի բերանը:

— Խմի՛ր, ճստո՛:

Ատամների ցավը խեղդում էր նրան, երկու կես անում՝ բաժանելով ցավի ծնած մաղձի և ալկոհոլի բերած կարճատև թեթևության միջև: Գաճաճը հռհռաց տգեղ, ռնգային, երկարատև ծիծաղով:

Սարսափը շիշը բարձրացրեց.

— Թող մաքրությունից պլպլա էս տարածքը,– ասաց նա՝ շշի կեսը երկու կումով դատարկելով:

Կարճահասակը հազաց, թքեց երկու անգամ, խոր շունչ քաշեց: Ձեռքերը դողում էին: Հապշտապ փորձ արեց թաքցնել դրանք գրպաններում, քանի դեռ ոչ ոք չէր նկատել դողը: Կարճահասակը ամբողջ սրտով ցանկություն հայտնեց, որ հորդառատ անձրև տեղա հենց այդ պահին, սակայն, ինչպես սովորաբար պատահում է, այս անգամ էլ բնությունը չենթարկվեց մարդկային ցանկությանը:

Նրա ոտքերը թուլացան, ծնկները ծալվեցին ցեխի մեջ: Բարձրահասակը բռնեց նրա օձիքից և վեր բարձրացրեց: Մի պահ լռություն տիրեց, լռության մեջ նրանք կանգնեցին իրար կողք և հարբեցողությունից ու անքնությունից կարմրած աչքերով նայեցին դիմացը փռված ամայի տարածությանը:

` . ~

Լակին ինչ-որ հոգեպահիկ ուներ, որը երկու հոգու համար բավական կլիներ՝ գնացքների կենտրոնական կայարանի հետնամասի մութ խաչմերուկներից մեկի մոտ գտնվող գյուղական հյուրանոցում մի սենյակ վարձելու, որտեղ ծաղկում էր մարմնավաճառությունն ու դրանից օգտվող հաճախորդների ճղճիմությունը:

Սենյակ ասվածն իրականում այնքան էլ նման չէր սենյակի, այլ մի ստորգետնյա խուց էր: Նկուղային այդ «սենյակը» դատարկված էր. փողոց էին հանել բորբոսնած իրերը, կոտրված կահույքի կտորները, քրքրված ծածկոցները, հին թերթերը (խոնավությունը դրանց բարակ էջերը տձև զանգված էր դարձրել): Ինչ-որ խավարասեր այդ ընթացքում հաջողեցրել էր խճճվել Լակիի օձիքի մեջ, որին նա երկու մատով անխնա տրորեց: Մի խոսքով, ութ ժամ կեղտի հետ կռիվ տալուց հետո Լակին հասավ իր բաղձալի երազանքին. գիշերելու տեղ երկուսի համար՝ անձեռնմխելի և օրինական: Մեկտեղանոց սենյակ, որը, հյուրանոցատիրոջ պնդմամբ, պետք է կիսեր մեկ ուրիշի հետ, սենյակ, որտեղ կար չոր սրբիչ, տաք ջուր, հնամաշ և ծակծկված սավաններ, փակ պատուհաններ, որոնցից այն կողմ անդադար եռուզեռ էր:

Կավատների կատաղի ձայներ, հաճախորդների հայհոյանքներ, գարշելի հաճոյախոսություններ, աղջիկների շինծու տնքոցներ, պատերից կախ եղջյուրներ, հարբածների երգեր, նավահանգստի մշտամնա մռընչյուն, երկու-երեք փշրանքների մասնատված գիշեր... Բայց, այդուհանդերձ, հրաշալի է տանիք ունենալ գլխիդ վերևում, այն էլ՝ գիշերվա կեսին: Ահա այս գիշերվա նրանց ապաստարանը... Մի սենյակ և մի շիշ էժանագին գինի, և այդ ամենը՝ երկուսի համար:

Մարկոնիսը տանջվում էր ծանր հազից, որը հատկապես ուժգնանում էր երեկոյան: Նա տաք ջուր էր խնդրել, որ դրանով մեղմի հազը, սակայն

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark